№ 23 ԹԷՀԵՐԱՆ ՇԱԲԱԹ 11 ՅՈՒՆԻՍԻ 1894 № 23

ԱՓԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱՓԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան: Առանձին համարները 5 շահի. Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի, կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի: Թէհրանում դրւում են միմիայն խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիւրակէ եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թէհրանի ազգային Ուսումնասիրաց ընկ. աղերսագրի եւ Վեհափառ Հայրիկի Կոնդակի առթիւ.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Դավրէժից. Նամակ Համատանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նորին Կայսերական Վեհափառութեան Շահինշահի պատասխանը առ Վեհափառ Հայրիկը. Արտաքին լուրեր. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թէհրանի ազգային Ուսումնասիրաց ընկ. աղերսագիրը եւ Վեհափառ Հայրիկի Կոնդակը

—

Մեր նախորդ թուով ծանուցինք արդէն որ Վեհափառ Կաթուղիկոսը բարեհաճել է մի կոնդակ ուղարկել առ Ազգային Ուսումնասիրաց ընկերութիւնը, ի պատասխանի նոյն ընկերութեան աղերսագրին: Այդ, մեզ պարտք ենք համարում ծանօթացնել „Շաւղի“ ընթերցողներին թէ արուած դիմումի և թէ տրուած պատասխանի հետ, որովհետև խնդիրը կենսական կարևորութիւն ունի պարսկահայերի բոլոր եկեղեցական և ազգային հաստատութեանց համար:

Այն ինչ Պարսկաստանի գրեթէ բոլոր քաղաքներում հասարակութիւնը կուսակցութիւնների բաժանուած, ամեն մէկը այս ինչ անձի կամ այն ինչ գործիչի անունը սանդի մէջ դրած ծեծում էր, ամեն մէկը իւր հակառակորդին համարելով բոլոր գժտութիւնների և չարիքների պատճառ, այն ինչ, կրկնում ենք այդ բոլորի մէջ մեծամասնութիւնը ըզբաղուած էր անձնական հարցերով, յիշեալ ընկերութեան համար պատուաբեր մի իրողութիւն է, որ նա թողնելով անձնական խնդիրները, անտես անելով մինչև իսկ իւր գոյութեան դէմ լարուած դաւերը, մտածեց սկզբունքների վերայ, ղեկաւարուելով այն շատ ուղիղ մտածութեամբ, որ պէտք է չարիքը արմատից խլել նոր ծիլերից միանգամայն ընդ միշտ ազատուելու համար:

Այդ նպատակից առաջնորդուած՝ ընկերութիւնը դիմեց առ Վեհ. Կաթուղիկոսը, ոչ թէ ջատագովելով մէկին, կամ պախարակելով միւսին, այլ խնդրելով կանոնադրութիւն և իրաւասութիւնների որոշում:

Եւ Վեհափառ Հայրիկը, իւր եօթանասնամեայ փորձառութեամբը, գնահատելով նոյն ընկերութեան արդարացի խնդիրքը, և հաստատելով իւր սրբատառ կոնդակի մէջ այն իրողութիւնը որ „յամենայն գործս և հաստատութիւնս հիմնական պայման յաջողութեան և յառաջադիմութեան կարգ ու կանոն համարին ապա ուրեմն անհնարին թուին բարիք անդ ուր ոչ գոյ կանոն, զի ի բացակայել կանոնի իւրաքանչիւր ոք բնականապէս զիւր կամս կանոն համարի“: Վեհափառ Հայրիկը, կրկնում ենք, այս վերջին նախադասութեամբ, այսպէս ասած, լուսանկարելով մեր վիճակը, խոստանում է շուտով ուղարկել կանոնների մի հրահանգ, ազգային և եկեղեցական հաստատութեանց բարւոք վարչութեան համար:

Այս իրողութիւնը պարսկահայերի կեանքի մէջ այնքան նշանաւոր մի քայլ է, որ մի դարագլուխ է կազմելու, և ինչպէս ասացինք, Ազգային Ուսումնասիրաց ընկերութեան պատիւ է բերում իւր նախաձեռնութիւնը այդ խնդրի մէջ:

Եւ պարսկահայերը որչափ երախտագէտ պէտք է լինին առ իւրեանց սիրելի Հայրապետական Աթոռը, իւրեանց բազմազբաղ պաշտելի Հայրիկը, որ այնքան ծանր և անթիւ զբաղմունքների մէջ ժամանակ է գտնում մտածելու իւր „բընակութեամբ հեռաւոր, սակայն սրտիւ մերձաւոր“ հօտի մասին մտածելու:

Իսկ փոքրիկ „Շաւիղը“ բերկրանքով լեցուած է տեսնելով որ իւր պաշտպանած դատերից մէկը արժանացել է ազգիս Հայրապետի ուշադրութեան, և յոյս ունի որ Պարսկաստանի հայերը, խրախուսուելով իւրեանց նուիրուած այդ վերին հոգածութիւնից, վերջապէս կը մտածեն լուրջ հիմունքների վերայ դնել իւրեանց հաստատութիւնները, և ամեն բանից բարձր դասել մեր ջանքերի միակ արժանի նպատակը—ազգային յառաջադիմութիւնը, որի առաջ ամեն կուսակցութիւն և հակառակութիւն պէտք է խոնարհուին:

Յոյս ունինք նմանապէս որ ապագայ կանոնագրութիւնը կազմած կը լինի բաւական բազմակողմանի և շրջանկատ կերպով, որպէս զի մի անգամ ընդ միշտ ապահովէ հաստատութեանց կանոնաւոր վարչութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԷԺԻՑ

—

30 մայիսի 1894

Մայիս 29-ին նորին բարձր սրբազնութիւնը պատարագը ընդմիջելով՝ կարդաց Վեհափառ Հայրիկի վերջին կոնդակը սովելոց մասին, որի մի քանի կէտերի վերայ կանգ առնելով և սրտառուչ բացատրութիւններ տալուց յետոյ, ներսի թաղից պ. Ա. Միքայելեանին, իսկ դրսի թաղից պ. Ա. Մելիք Աբրահամեանին նշանակեց որ հանգանակութիւն անեն յօգուտ սովեալների: Այդ օրից յարգելի պարոնները շատ մեծ եռանդով արդէն սկսել են հանգանակութիւնը: Լիայոյս ենք որ դավրիժէցիները չեն խնայել իրանց լումաները ձգելու այս հասարակական գանձարանի մէջ, ի նկատի ունենալով՝ որ դրանով իրանց մարդկային պարտքն են կատարում:

—

Չը կարողանալով երկար դիմանալ Տաճկահայաստանում տիրող տնտեսական անողոք պայմաններին՝ Աղբակից Սալմաստ են գաղթել հարիւր քսան տուն անտէր, անտերունչ, մերկ և քաղցած ընտանիք: Մեր բարեխնամ կառավարութիւնը տեսնելով գաղթականների անտանելի վիճակը, ցոյց տուեց իւր դարևոր ողորմածութիւնը՝ ընակեցնելով նորանց Սալմաստի զանազան հայաբնակ գիւղերում: Սալմաստի հայերը չը կա-

բողանալով հոգալ բոլոր դաղթականների անթիւ նիւթական պակասութիւնները և այդ բոլորը քաջ յայտնի լինելով դաղթականներին՝ վերջիններս իրանց կողմից մի պատգամաւորութիւն են ուղարկում Դավրէժ՝ ս. առաջնորդի մօտ և խնդրում նորա հայրախնամ հոգատարութիւնը։ Ս. առաջնորդը դիմել է ուր որ հարկն է նրանց բնակելուն դիւրութիւններ տալու համար։

—

Խոյի Սէյդավար գիւղում անմեղ զբաղարտութիւնների զոհ դնալով՝ նոյն գիւղի տէր Ստեփան քահանան, խիստ դանակոծուել է մի քանի գիւղացիների հետ միասին։ Նորանից առել են 350 թուման տուդանք։ Տէր հայրը մի քանի գիւղացի ների հետ եկել է Դավրէժ բողոքելու ուր որ հարկն է։

Ընդհանրապէս դաւառական դործերը լաւ չեն գնում, չը դիտենք ինչին վերագրենք, իսկ ուսուցիչներ քահանաներ անպատուելը՝ մեզ մօտ դարձել է սովորական մի բան այս վերջին ժամանակները։

Մայիս 22-ին առաջնորդարանում, նախագահութեամբ ս. առաջնորդի տեղի ունացաւ „Սէր“ ընկերութեան երկրորդ ընդհանուր ժողովը։

Ներկայ էին անդամներից ընդամենը տասնութ հոգի։

Ապրիլ 3-ին ընտրուած քննիչ մասնաժողովը ժողովին ներկայացրեց նոր ուսումնասիրուած կանոնագրութիւնը և իւր տեղեկագիրը հաշիւների մասին։

Ս. առաջնորդը բանալով ժողովը՝ խնդրեց պ. Սեդրակ Միրզոյեանից, կարդալ նոր ուսումնասիրուած կանոնագրութիւնը։

Կարդալուց յետոյ ս. առաջնորդը առաջարկեց նոր վարչութեան ընտրութիւն։ Ներկայ եղող անդամների սակաւութեան պատճառով, ընտրուեցան երեք հոգի վարչութեան անդամ՝ երեք անձնափոխանորդներով. այն ինչ ըստ նոր կանոնագրութեան՝ վարչութիւնը պէտք է բաղկանայ հինգ հոգուց՝ հինգ անձնափոխանորդներով։ Տեղացի ժողովուրդի մեծ մասը շատ սառնութեամբ է վերաբերուում դէպի այդ համակրելի ընկերութիւնը, բացի մի քանի արհեստաւորներից. ի հարկէ ամենքը կուզենան իմանալ թէ ինչու. ահա թէ ինչու։ Ամենքը մեզանից ուզում են որ իրանք անցնին գործի գլուխ, փայլելու նպատակով։ Իսկ „Սէր“ ընկերութիւնն էլ աշխատում է իրան հեռի պահել այդպիսիներից։ Հէնց այդ է պատճառը, որ „Սէր“ ընկերութեան թշնամիները հազար ու մի տեսակ զրպարտութիւններ բարդելով ընկերութեան վարչութեան անդամների վերայ, ցցել են ընկերութեան վարկը։ Գովելի է հիմնադրի եռանդուն գործունէութիւնը, որ լսածները բանի տեղ չը դնելով՝ համարեայ թէ միանակ առաջ է տանում իւր սրտի մօտիկ դործը, ահագին զոհողութիւններ յանձն առնելով։ Իմ կարծիքով նորին բարձր սրբազնութիւնը կարող է մեծ զարկ տալ այս համակրելի գործին, եթէ միայն բարեհաճէ դաւառական տեսչութիւնը յանձնել „Սէր“ ընկերութեան վարչութեան։ Հաստատ աղբիւրներից լսում ենք, որ մի ստուար խումբ սալմաստեցիներ մտադիր են այսպիսի մի առարջարկութիւն անել նորին բարձր սրբազնութեան։ Լիայոյս ենք, որ ս. առաջնորդը կը լսէ ժողովրդի ձայնը։

(Հասս)

ՆԱՄԱԿ ՀԱՄԱԴԱՆԻՑ

—

7 յունիսի 1884

Համադանի մէջ դտնուում է 30 ընտանիքից բաղկացած մի հայ դաղթականութիւն։ Այս հայերի մեծամասնութիւնը զբաղուում է օդեվաճառութեամբ՝ մի քանի ընտանիք, որ կազմում են միջակ դասակարդը, պարապուում են փոքրիկ առևտուրներ անելով, ուսուցչութեամբ (բողոքականների ուսումնարաններում), դերձակութեամբ և այլն, և միայն մէկ երկու ընտանիք կան որոնք աչքի ենընկնում իրանց ունեցած պաշտօնով կառավարութեան ծառայութեան մէջ, և համեմատաբար ընդարձակ վաճառականութեամբ։ Ինչ վերաբերուում է ազգային հաստատութիւններին, դոցա հոտն անգամ չը կայ Համադանում։ Համադանցիներն ապրում են կատարելապէս կղզիացած, անջատուած ամբողջ հայութիւնից, նոքա չը դիտեն թէ ինչ է կատարուում իրանց շուրջը, թէ ինչ են անում ուրիշ տեղի հայերը, նոքա ոչինչով չեն հետաքրքրուում ազգային բազմաթիւ խնդիրներով, որոնք ամեն օր բացուում են ամեն տեղ։ Ի վերայ այսու ամենայնի Համադանը դուրկ չէ ուսումնարանական հաստատութիւններից, որոնք անբացառապէս պատկանում են ամերիկացի միսիոնարներին, բայց քանի որ այդ ուսումնարանների մէջ ուսանողների մեծամասնութիւնը հայ երեխաներ են հետևաբար ես չէի կարող չը հետաքրքրուիլ նորանցով և այժմ դալիս եմ տեսածներս հաղորդել „Շաւղի“ ընթերցողներին։ Համադանում կայ երեք ուսումնարան, երկու օրիորդաց և մէկը տղայոց։ Ես նախ այցելեցի օրիորդաց այն ուսումնարանը որ դտնուում է հրէաների թաղում։ Այստեղի աշակերտուհիները հրէաներ են անբացառապէս, և ուսումնարանն էլ մի տեսակ նախակրթարան է, ուր յիսունի չափ մեծ և փոքր երեխաներ խառն սովորում են, սորա վերայ երկար կանդ չը պիտի առնեմ, այնքան միայն կարող եմ ասել, որ այդ փոքրիկ աղջիկները շատ լաւ դիտէին իրանց աշխարհագրութիւնը, որի դասին ներկայ էի։ Այդ տեղից անցայ տղայոց ուսումնարանը, որ նոյնպէս դտնուում է հրէաների թաղում, և ուր հայ և երբայեցի երեխաները միատեղ են ուսանում։ Նախ և առաջ տունը շատ անյարմար է մի ուսումնարան լինելու. կեղտոտ, խարխուլ, փոքրիկ, այդ հրէական տունը մտնելուց մարդ երբէք չէ մրտածում որ մի ուսումնարան է մտնում, յետոյ ամբողջ ուսումնարանի մէջ չը կայ ոչ մի կարդ և կանոն։ Եւ ինչ որ աշխատեցի հասկանալ թէ քանի տարուայ ընթացք կայ այստեղ, և թէ աշակերտները ինչ են անցնում ամեն տարի, չը յաջողուեցաւ ինձ յաղեցնել իմ հարցասիրութիւնը, և ինքը գարմանք քանի որ փոխ-տեսուչը, որ ինչ պէտք է հսկզորդէր, այդ տեղեկութիւններ, ամենայն անկեղծութեամբ խոստովանուեցաւ որ ինքն էլ մի բան չէ հասկանում այդ ուսումնարանից։ Այդ ուսումնարան կոչուած տան մէջ ես քսայ վեց դասարան, բայց թէ դասարաններից որն էր աւելի բարձր այդ դժուար էր ըմբռնել, ամենաբարձրը հաշուելով առաջնից։ Ես նոյնպէս ոչ մի սիստեմ չը կարողացայ գտնել մաթեմատիկայի դասաւանդութեան մէջ. հինգերորդ դասարանը ուսանում է այլէբրա միևնոյն ժամանակ և չէր կարողանում լուծել թուաբանական մի պարզ խնդիր, որ ամեն փոքր ի շատէ կանոնաւոր ուսումնարանի երրորդ տարուայ աշակերտները պէտք է դիտենան լուծել, և աւելի զարմանալին այն է որ այդ դասարանը թուաբանութեան ոչ մի դաս չունի, երևի նոցա դիտեցածը արդէն բաւական է համարուում։

Սրբազան պատմութեան դասը, որ սովորաբար ամենից ուժեղ առարկան է բողոքականների ուսումնարաններում, նոյնպէս թոյլ երևաց ինձ. հինգերորդ դասարանի աշակերտները չը դիտէին թէ իսրայէլացիների գերութիւնը քանի տարի տևեց Բաբելոնում։ Մէկ առարկայ միայն ցանկացածի չափ ուժեղ է այս ուսումնարանում, և այն է պարսկերէն

լեզուն, որը, ինձ թուեց, որ աւելի ուսուցչի եռանդի արդիւնքն է քան թէ ուսումնարանի ծրագրի և ուղղութեան։ Ընդհանրապէս առնելով այս ուսումնարանը թողուած է բոլորովին անյոգ. սիստէմ, մէթոդ բաները չը կան այնտեղ, դաստիարակութիւնը բացակայ է, ամենքան նորա մէջ անյարմար է իւր բարձր կոչման, և ամենևին պատիւ չէ բերում ամերիկացի միսիոնարներին և ուսումնարանի անօրէնին։ Մէկ բան մոռացայ ասել ի գովեստ այս խարխուլ հաստատութեան որ նորա մէջ նոր նոր սկսել են աւանդել հայերեն լեզուն՝ մեր արարատեան դասագիրքերի վերայով փոխարէն պահելու իրանց նախկին գրաբառի և Պօլսոյ բառբառի տպօրինի խառնուրդը. խառնուրդ՝ որ երկու անգամ աւելի անբնական է մեր պարսկահայերիս համար որ խօսում ենք արարատեանը։

(կը շարունակուի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵԸ

Մեզնից անկախ պատճառներով անցեալ շաբաթուայ թերթը չը կարողացանք դուրս բերել

Պարսկերէն „Էթթէլա“ լրագիրը, որ հրատարակւում է Մամուլի նախարարութեան խմբագրութեամբ, և որը մինչև այժմ տպւում էր վիմագրութեամբ, այժմ սկսած է տպուիլ տպագրական տառերով, և ստացել է աւելի դիւրընթեռնլի և գեղեցիկ դիրք։ Մամուլի նախարար Ն. Վ. Էթէմադ Սալթանէն, որ այնքան հեղինակութիւններով ծանօթ է պարսիկ և եւրոպական շրջաններում, ոչ մի միջոց չէ խնայում լրագրութեան առաջադիմութեան համար։

Մեր ստացած մի թղթակցութեան մէջ մեզ հաղորդում են, որ Դավրիժու բոյոքականների տղայոց դպրոցի վարչութիւնը որոշել է այլ ևս լուսաւորչական ուսուցիչ չը պահել։ Մեզ այս լուրը տարօրինակ է թւում, մանաւանդ այն պատճառով որ մեզ ուղարկուած մի քանի թղթակցութեանց մէջ յայտնուած էր այն կարծիքը՝ որպէս թէ այդ դրպրոցում յառաջադէմ ուղղութիւն է սկըսել տիրել. ինչպէս համաձայնեցնել այս երկու հակասութիւնները։

Նոր Զուղայից մենք ստացել ենք մի երկար թղթակցութիւն „Հայ“ ստորագրութեամբ, որ մի առ մի թւում է Տէր Եսայի Սրբազանի հակառակորդների գործ դրած բոլոր ստորութիւնները և երեխայութիւնները։ Ցամակը չենք կարող տալել, որովհետև այդ մասին ժամանակին գրուած է, թէև ոչ այդքան մանրամասն. բայց „Շաւղի“ փոքրիկ ծաւալը թոյլ չէ տալիս երկար յօդուածներ նուիրել մէկ որ և է հարցի։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

(„ԱՐԱՐԱՏ“ ԱՄՍԱԳՐԻՑ ԱՐՏԱՏՊՈՒՄ ԵՆՔ ՀԵՏԵՒԵԱԼ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Նորին Ս. Օծութիւն Վեհ. Հայրապետն ամենայն Հայոց, Գեր. Սուքիաս Արքեպիսկոպոս Պարզեանցին Ատրպատականի ընդհանուր առաջնորդ կարգելով, մի առանձին գրութեամբ առ Արեգակնափայլ Շահն Պարսից և առ Սադրազամն, յանձնարարած էր զՆորին Գերապատուութիւնն Նորին Մեծութեան բարեհաճ խնամոցը։

Ի պատասխանի Իւր գրութեանց Նորին Ս. Օծութիւնը ստացաւ յետագայ պատասխանագիրները Նորին Մեծութիւն Շահնշահից և Նորա Սադրազամից։

Թարգմանութիւն Հրովարտակի Արեգակնափայլ Շահին Պարսից առ Սրբազնագոյն Կաթուղիկոսն Ամենայն Հայոց Տ. Տ. Մկրտիչ։

Կնիք Նորին Մեծութեան Նասր Էդդին Շահի

Նորին հրեշտակատիպ Եպիսկոպոսին Կրօնաւորացն Յիսուսի, մեծն ի մեծափառ պաշտօնէից Մեսիայի, Կաթուղիկոսին Կաթուղիկոսաց Մկրտչի Առաջնոյ Մեծի Հայրապետին ամենայն Հայոց՝ որ ի սփիւռ աշխարհի, արժանացեալ Աստուածային շնորհաց, ընդ որս նաև վաստակեալ ըստ ամենայնի զարժանաւորութիւն Մեր և հասեալ մերումըս արեգակնափայլ սիրոյ յիշատակութեան։

Ի համբառնալն Ձեր գերերջանիկ անձին ի Գահ Հայրապետութեան Սրբոյ Էջմիածնի, յայտ առնէիք Մեզ զընտրեալն ի Ձէնջ զԳեր. Սուքիաս Արքեպիսկոպոս յառաջնորդութիւն վիճակին Ատրպատականի վասն հովուելոյ և առաջնորդելոյ զՀայազգի ժողովուրդն Ատրպատականի՝ որ ընդ հովանաւորութեամբ Մերով բարձր իշխանութեան։ Վասն այսր ամենայնի զյղեալն առ Մեզ զգրութիւն Ձերդ Սրբութեան՝ ընթերցաք, և յառաջնում պարբերութեան այդր գրութեան Ձերում՝ յորում յիշատակէք զընտրութիւն Ձեր յԱթոռ Հայրապետութեան ամենայն հայոց՝ լիսիրան ուրախացոյց զՄեզ։ Վասնորոյ ի խորոց սրտի շնորհաւորեմք և մաղթեմք առ բարձրեալն Աստուած, զի զբարձրութիւն Ձեր բազում ամաց, և որպէս առաջընթաց Հովուապետ ազգին Հայոց մեծապանծ պատուոց արժանացուսցէ. տացէ Ձեզ Աստուած կար և զօրութիւն վասն լի ակատար գործադրելոյ զամենայն տրամադրութիւնս կրօնի։

Երկրորդում պարբերութեան գրութեան Ձերում՝ յորում յիշատակէք զընտրութիւն Սուքիաս Արքեպիսկոպոսին յառաջնորդութիւն Ատրպատականի, ըստ Ձեր փափագանաց ծանեաք և ընկալաք զՆորին Գերապատուութիւն. և հրովարտակաւ հրամայեցաք յամենայն Կառավարչաց Բարձրագոյն Թագաւորութեանս Մերոյ Իրանի որպէս զի ընդ միշտ՝ ի նկատի ունիցին զպատիւ Նորին Գերապատուութեան, որպէս և խնդրուածոց Նորին տացեն հնարաւորութիւն։ Եւ քանզի իղձք Մեր անդստին ի նախահարց Մերոց ցայսօր եղեալ է, զի բովանդակ հպատակք՝ առանց իրիք խրտրութեան, որք ընդ Մերովս Բարձր Թագաւորութեամբ Իրանի, կացցեն և մնասցեն ի բարօրութեան, այնպէս և հայ ժողովուրդն՝ որ ի հնուց անտի ժամանակաց վայելեալ է զսէր և զշնորհս Նախնեաց Մերոց, հաճիմք զի յամենայն կողմանց լինիցի յապահովութեան, յազատութեան, անձնատուր եղիցին գործոց իւրեանց և վաստակոց։ Բարեմաղթեմք առ Աստուած զի Դուք ևս հանգոյն Նախորդաց Ձերոց ընթանայցէք ի նոյն շաւիղ, և հոգևոր հովիւք Իրանի որք գտանին ընդ Ձերով իշխանութեամբ կացցեն՝ ի Ձէնջ հրամայեալ՝ ի նոյն հրահանգս և պատուիրանս, և ի նկատի ունիցին զօգուտ ազգի և կառավարութեան Մերոյ։

Եմք և մնամք բաղձացողք քաջառողջութեան Ձերդ Սրբութեան և խնդրեմք վերառաքել զսրտեռանդն աղօթս վասն Մեր ի սրբավայրսն Էջմիածնի։

Ցամսեանն շապան յամի 1311 ի քառասներորդ յեօթներորդ ամի թագաւորութեան Մերոյ։

Թարգմանութիւն թղթոյ մեծի Նախարարին Պետութեան Պարսից։

Ընկալեալ է մեր յանկեղծութենէ բղխեալ զգրութիւն Ձերումդ յարդապանծ, առաքինազարդ և հրաշալի Վեհափառութեան՝ որ դասակից էք հրաշա-

լի Վեհափառութեան՝ որ դասակից էք հրեշտակաց, և զյարգական և պատկառելի գրութիւնն առ փառապանծ, նուիրական և թագակիր թագաւորն ամենայն Իրանի—յաւերժացուսցէ Տէր յամս յամայր զթագաւորութիւն Նորա—զոր հաստատեաց ի ձեռն Նորին Բարձր Մեծութեան, ըստ ցանկութեան Զերումդ Վեհափառութեան, յորում առաջադրեալ էք ի Զէնջ ընտրեալ զԳեր. Սուքիաս Արքեպիսկոպոսն յառաջնորդութիւն Ատրպատականի վիճակին բովանդակ Հայոց։ Առ այս բանք Զեր յոյժ հաճոյ գտան առաջի Շահնշահին, ուստի և Նորին Մեծութիւնն հաճեցաւ հաստատեալ զհրովարտակ հաստատութեան առ մեզ, որով պարտիմք մերովսանն ի կատար ածել զցանկութիւնս և զխնդրուածս Նորին Գերապատուութեան, և տալ նմա աջակցութիւն վասն կրօնական և ազգային գործոց հայազգի ժողովրդեան։

Արդ ամենայն ակնածութեամբ աղերսեմք զՍրբութիւն Զեր մի մոռանալ և զիս զանձնանուէրս յաղօթս Զեր ի Ս. Տեղիս. ընկալարուք լինէն զհաւատիս սրտագին և մտերիմ անձնուիրութեանս։ Հոգւով չափ անձնուէր Զեզ։

—

Ի վերայ ծրարի Նորին Վեհափառութեան գրեալ է հետևեալ հասցէն հանդերձ կնքով Նախարարին արտաքին գործոց։

—

Նորին Սրբութեան Մեծին յամենայն Կաթուղիկոսացն (Խալիֆ) Յիսուսի, Սրբազնագունին յամենայն կրօնաւորացն Մեսիայի. Կաթուղիկոսին Կաթուղիկոսաց և Մեծի Հայրապետին ամենայն Հայոց՝ որ ի սփիւռս աշխարհի, Մկրտչի Առաջնոյ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—„Նոր-Դար“ լրագրից քաղում ենք հետևեալը Շուշուց սովեալների օգտին հանգանակութիւնը շարունակելով հասել է մինչև 1,250 րուբլու։ Մայիսի 8-ին յանձնաժողովի անդամները 1,200 րուբլի պոստը ձգեցին ուղղակի Նորին Վեհափառութեան անունով։ Դերձակներն իրենց մէջ ստորագրութեան թերթեն բաց արել նոյն նպատակով։ Առ այժմ 30 րուբլի է ժողովուած։

—„Մշակից“ քաղում ենք հետևեալ լուրը։ Լոնդոնի Բիբլիական ընկերութիւնը մի արագատիպ մամուլ է ընծայել Էջմիածնի տպարանին։ Մամուլը ամենալաւ տեսակից է։

Արտօնատէր-Հրատարակիչ՝ Անդրէաս Բէկնազարեանց։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԹԻՒ
1794 ՀԱՐԻՒՐԱՄԵԱՑ 1894
ՅՈՒԲԵԼԻՆԻ ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ
„ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ“
ԼՐԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԱՆԷ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ
1894 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1-ԻՆ

Մեծ միաձալ գիրքով ԼՈՒՍԱՏԻՊ (phototypique) պատկեր մը, որին մեծութիւնն է՝ 50—35 սանտիմետր, տպուած 70—45 սանտիմետր թարտոնի (carton) վրայ այլեւայլ բնագրով։ Պատկերս պիտի ներկայացընէ՝ մէջտեղը հայ լրագրութեան Հիմնադրին՝ Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳՀՇՆՑ. ՇՄԱՒՈՆԵԱՆԻՆ պատկերը, եւ բոլորտիքը 1894-ին հայերէն լեզուաւ հրատարակուող բոլոր ԼՐԱԳԻՐՆԵՐԸ, իրանց ԽՄԲԱԳՐԱՊԵՏՆԵՐՈՒ պատկերներով։

„1794 ՀԱՐԻՒՐԱՄԵԱՑ ՅՈՒԲԵԼԵԱՆ ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ, 1894“

պատկերը կարելի է ստանալ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՄԲ։ Մէկ օրինակի բաժանորդագինը է ՐՈՒԲԼԻ 1.—կամ 6 դրան։ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍԸ խմբագրութեանս վրայ է։

Պարսկաստանից պէտք է դիմել ուղղակի «ՇԱՒԻՂԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ, տալով նաեւ հասցէն որոշ գրուած, առանց ենթադրելու մեղի ծանօթ լինելն։ Կարելի է. նաեւ բաժանորդագրուիլ մեր Յարգոյ Գործակալաց ձեռօք։

Ծանօթ. Բաժանորդագրութիւնը շարունակւում է Պարսկաստանում մինչեւ Օգոստոսի մէկը։

Թէհրանի Հայկազեան երկսեռ դպրոցի համար հարկաւոր է մի ուսուցիչ, կրօնի, հայոց լեզուի, հայոց պատմութեան, թուաբանութեան եւ այլ մասերի։

Մի վարժուհի, կար ու ձեւի, ձեռագործի, հայոց լեզուի, եւ թուաբանութեան։ Ամեն մէկը շաբաթական 26 ժամ դասով։ Պահանջւում է կանոնաւոր դպրոցի վկայական։ Պայմանների համար դիմել „Շաւիղի“ խմբագրութեան։

ՅԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է
„ԱՂԲԻՒՐԻ եւ ՏԱՐԱԶԻ“
ՆԵՐԿԱՑ ԹԻԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԱՂԲԻՒՐԻ բաժանորդագինը առանց սրբեմիանների 3ր.
ՏԱՐԱԶԻՆԸ 6 ր. է հասցէն Tiflis. Réd. „Agbiour et Taraz“.
ՈՂ. ԿԱՄԵՆՈՒՄ ՍՏԱՆԱԼ 8 ՊԱՏՆԵՐ ԻՐԵՆԻ ՊՐԷՄԻԱ, ՊԷՏՔ Է ՈՒՂԱՐԿԷ ԵՒ 5 ՐՈՒԲԼԻ.

Խմբ. Հրատ. Տ. ազարեան

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ՐԱՖՖԻ
ԱՐԾԻՒ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ
Հայրիկի պատկերով

ՐԱՖՖԻ դրքերից ցանկացողները կարող են դիմել ուղղակի հեղինակի այրիին,
Որն հասցէն է. Тифлисъ АННА РАФФИ
Շուտով լոյս կը տեսնի „ԶԱՀՐՈՒՄԱՐ“ ռոմանիպ եւ մեծ աշխատութիւնը։